ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 14 - Ա
07 փետրվարի 2014 թ.

ՄԱՐԶԻ ԱՂԲԵՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ՍՊԱՐՏԱԿ ՍԱՐԻԲԵԿԻ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի N 210-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի <բ> ենթակետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ- 728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Մարզի Աղբերք համայնքի ղեկավար Արթուր Շահենի Երիցյանի՝ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից կալանավորվելու և համայնքի ղեկավարի լիազորությունները կատարելու ժամանակավոր անհնարինության պատճառով համայնքի ղեկավարի լիազորությունների կատարումը ժամանակավորապես վերապահել համայնքի ղեկավարի տեղակալ Սպարտակ Սարիբեկի Սարիբեկյանին:
2. Սպարտակ Սարիբեկի Սարիբեկյանին՝ համայնքի ղեկավարումն իրականացնել <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված լիազորություններով:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2013 թվականի նոյեմբերի 20-ի <<Մարզի Աղբերք համայնքի ղեկավարի լիազորությունների կատարումը ժամանակավորապես Վարուժան Վահանի Դավթյանին վերապահելու մասին>> N 210 – Ա որոշումը:
4. Մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ի. Ասատրյանին՝ սահմանված կարգով կազմակերպել հանձնընդունելությունը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ